Հավելված 2
2024թ. Հուլիսի 15 -ին
կնքված N «ՀՀԽԱ-ԴԱՄ-02/24» պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից հանրային մուլտիպլեքսի միջոցով հեռարձակվող կրթական մշակութային տեսալսողական ծրագրի Բարձր հստակության (HD resolution (լուծաչափ)) հեռարձակման ապահովում
Դրամաշնորհի N	ՀՀԽԱ-ԴԱՄ-02/24
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	15-ը հուլիսի 2024 թվականից 15-ը դեկտեմբերի 2024 թվականը
Հաշվետու ժամանակահատված	15-ը հուլիսի 2024 թվականից 15-ը դեկտեմբերի 2024 թվականը
Ներկայացման օր	13-ը դեկտեմբերի 2024 թվական
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Աննա Սարգսյան «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձ

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ տարածքում հանրային մուլտիպլեքսի միջոցով հեռարձակվող Ստանդարտ հստակության (SD 720x576 resolution(լուծաչափ)) հեռարձակման ձևաչափը Բարձր հստակության (HD 1920x1080 resolution (լուծաչափ)) հեռարձակման ձևաչափով փոխարինման նպատակով կատարվել են հետևյալ գործողությունները՝

2.1.1 Ձեռք է բերվել և տեղակայվել հեռարձակման սարքակազմ, որը հագեցած է Բարձր հստակության (HD) հեռարձակում ապահովող տեխնիկական համակարգերով և ունի նաև հետագայում 4K ձևաչափով հեռարձակման անցման հնարավորություն:

2.1.2 Տեղակայված հեռարձակման սարքակազմի գործարկմամբ հանրային մուլտիպլեքսի միջոցով ապահովվել է Ընկերության տեսալսողական ծրագրի Բարձր հստակության (HD 1920x1080 resolution (լուծաչափ)) հեռարձակում:

2.1.3 Ստացված դրամաշնորհի շրջանակներում կատարվել են հետևյալ ծախսերը

Հ/Հ	Անվանումը	Չափ"միավորը	Նախատեսված	Փաստացի	Շեղումը
Ա	**Աշխատավարձ/Ծառայություններ**				
1	Գնումների համակարգողի ծառայություն	հատ	1	1	
	Ընդամենը Աշխատավարձ/Ծառայություններ	**դրամ**	**250 000**	**250 000**	
Բ	**Ծրագրային ծախսեր**				
1	Հեռուստաթթերի և ինտերնետ հեռարձակումների վերարտադրման և ավտոմատացման ծրագրա-ապարատային համակարգ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	կոմպլեկտ	1	1	
2	Ձայնային հսկման սարք / Audio Monitor SDI /12G/ մուտքով (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
3	Տեսավահանակ 4k/HD-SDI 8 մուտքով (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
4	Հեռուստացույց-մոնիտոր՝մեկը եթեր հեռարձակող սարքի բոլոր մուտքերի և ելքերի հսկման համար, երկրորդը տեսավահանակի բոլոր մուտքերի և ելքերի հսկման համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	2	2	
5	Հեռուստացույց եթերը դիտելու համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
6	Եթեր հեռարձակող սարքի մուտքերի և ելքերի տեսաազդանշանները մոնիտորի վրա բաժանող սարք /multiviewer/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
7	Մոնիտոր ազդանշանի որակը հսկելու համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
8	Ձայնային վահանակ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում) նախատեսված է տաղավարներից, հեռուստաաշտարակից, շարժական հաղորդիչից և այլ տեղերից ստացվող ազդանշանների ձայնի որակը և կառավարումը կատարել մինչև եթեր	հատ	1	1	

	հեռարձակելը:				
9	Սարք մուտքային ազդանշան տեսագրելու համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	2	2	
10	Հիշողության սարք /NAS Storage/ առնվազն 200 TB տարողությանբ, հեռարձակվող բոլոր նյութերը ներբեռնելու համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
11	Սարք բոլոր ֆորմատները և ազդանշանները փոխելու համար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
12	Պահարան հատակի, դարակաշարերով, սարքերի համար /19" 24 RU free standing rack / (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
13	Անխափան սնուցման սարք / APC Smart UPS 5000VA Rackmount / (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
14	Վիդեոլար /COAXIAL CABLE / (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	մետր	100	100	
15	Ձայնային լար (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	մետր	100	100	
16	Հարակցիչ Canare L-4.5 CHD մալուխի համար /խրոց/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	50	50	
17	Ձայնի մալուխային հարակցիչ, եռակոնտակտ «male»/«famale»/ Խրոց XLR FX 25 հատ և MX 25 հատ/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	50	50	
18	Ցանցային երթուղիչ /Switch/	հատ	1	1	
19	Ցանցային քարտ համակարգիչների համար /10GBase-T PCIe Network Adapter/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	15	15	
20	UTP լար 6-րդ կատեգորիայի /CAT6A/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	մետր	300	300	
21	Տեսաերթուղիչ 20x20 /12G/ 4K /Videohub (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
22	Երկկողմանի փոխակերպիչ SDI to HDMI / 12G/ 4K (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	4	4	
23	Համաժամանակեցման գեներատոր /Sync Generator /6 ելքով (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	2	2	
24	Տեսաազդանշանի բաժանիչ /1x8 4K/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	2	2	
25	Տեսաազդանշանի և ձայնի բաժանիչ / De-Embeder SDI to Audio/ 4K (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	2	1*
26	Տեսաազդանշանի խաչաձև փոխակերպիչ / UP Down cross HD/ (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	2	1	-1*
27	Լիցենզիա «Էրիկսոն» ենկոդերի համար /1920x1080i HD եթերի /, AVP4000 System Encoder P/N- FAP1303536, ABR HD Value Pack (AVP/UPS/VP/ABR/HD) P/N-FAT1023707 (ձեռքբերում, տեղակայում և սպասարկում)	հատ	1	1	
	Ընդամենը Ծրագրային ծախսեր	**դրամ**	**50 715 200**	**48 365 000**	**2 350 200**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ	**դրամ**	**50 965 200**	**48 615 000**	**2 350 200**

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ին դրամաշնորհի տրամադրման դիմում – հայտարարությունը ներկայացնելուց հետո, մինչև գնման գործընթացը կազմակերպելը պարզ է դարձել, որ Հայտի 25-րդ կետում նշված Տեսաազդանշանի և ձայնի բաժանիչից անհրաժեշտ է երկու հատ՝ մեկ հատի փոխարեն, և փոխարենը 26-րդ կետում նշված Տեսաազդանշանի խաչաձև փոխակերպիչից անհրաժեշտ է մեկ հատ՝ երկու հատի փոխարեն: Հիշյալ փոփոխության ընթացքում գումարային փոփոխություն տեղի չի ունեցել: Գնումը կատարվել է ըստ վերոնշյալ պահանջի:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հոգևոր-մշակութային հանրային ՀԸ հեռարձակման ծրագրում Բարձր Հստակության պատկերի որակ ապահովելու համար ոլորտի մասնագետների հետ ուսումնասիրվել է շուկայում առկա HD հեռարձակման նորագույն մոդելներն ու գնառաջարկները, ընտրվել է անհրաժեշտ սարքակազմը: Հրապարակվել է գնումների պլան, պատրաստվել է գնման հայտ, տեղադրվել է գնման ընթացակարգի հայտարարություն: Գնահատվել են ընթացակարգի հայտերը, կատարվել է մասնակցի ընտրություն, հրապարակվել է պայմանագրի կնքման որոշումը, տեղադրվել է կնքված պայմանագրի հայտարարությունը: Վերակահավորվել է հեռարձակման սրահը և մասնակցի կողմից իրականացվել է սարքավորումների տեղակայում, որից հետո Հեռարձակման սրահը վերագործակվել է HD հեռարձակումն ապահովելու համար:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Առկա չէ:

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Ծրագրի իրականացման համար նպատակահարմար է սահմանել կատարման ավելի մեծ ժամանակահատված, քանի որ մատակարարումները, որոնք կապված են բեռանափոխադրումների հետ, լրացուցիչ բարդություններ կարող են ստեղծել ժամկետների հարցում: Ծրագրի գործողությունների իրականացման ընթացքում մենք նույնպես հանդիպել ենք նմանատիպ խնդրի, որը, սակայն, լուծվել է պատշաճ ժամկետներում: Մատակարարի կողմից հայցվել է մատակարարման ժամկետը 30 օրով երկարացնելու առաջարկ, փոխհամաձայնությամբ մատակարարման ժամկետը երկարեցվել է 15 օրով՝ սահմանելով մինչև 2024 թվականի դեկտեմբերի 5-ը, սակայն այդ ժամանակահատվածում մատակարարումը չի իրականացվել և փաստացի հանձնում – ընդունումը կատարվել է դեկտեմբերի 13-ին՝ հաշվարկելով կետանց օրերի համար Մատակարարման պայմանագրով սահմանված տույժը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

Ծրագիրն ավարտված է (ոչ կիրառելի):

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Պատրաստվել և տրամադրվել է հեռարձակման սարքակազմի և սրահի համար անհրաժեշտ կառուցվածք ունեցող տարածք՝ բաղկացած երկու առանձին սենյակներից: Սենյակներից մեկում տեղադրվել են այն սարքերը, որոնք պահանջում են մշտական հովացման համակարգ: Մյուս սենյակում տեղակայվել է հեռարձակման աշխատասրահը՝ համապատասխան սարքավորումներով: Ապահովվել են տարածքի անհրաժեշտ ջերմաստիճանի պահպանման համակարգը և թողարկիչների աշխատանքային պայմանները:

Աննա Սարգսյան

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձ

13-12-2024թ